ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ՏԱՆԸ

Տեսարանը ներկայացնում է Նազարի տան բակը։ Ձախակողմը չարդախաւոր խրճիթ է. մի պատուհանով եւ դռնով։ Դիմացը բակի պարիսպն որ դէպի աջ ձգուելով առաջ է ծռուում եւ հենց այդ անկիւնում բակի դուռն է։ Այնուհետեւ պատը դէպի առաջ է գալիս եւ վերջանում այնպէս, որ աջակողմը մի փոքրիկ հրապարակ է գոյանում։

Խրճիթի ձախ անկիւնից մուտք է բացւում դէպի նրա հետեւը։ Դիմացի պարսպի հետեւ, եւ աջակողմը անտառ է։ Պարսպի դիմաց պատին լուացքի գոյնզգոյն շորեր են փռուած։ Ձախակողմը տան դռան եւ չարդախի անկիւնում մի կամ է դրած, որի հետեւը ծակուռ է գոյանում։

Օրը թեքւում է դէպի երեկոյ։ Արեւը ցոլում է բակի մէջ, ուր մի չինարի ստուեր է անում։ Շների հեռու հաչոց է լսւում։

ՆԱԶԱՐ.– (ծոյլ շարժումներով, զզգզուած մազերով, խոշոր, հասակաւոր մարդ, երեւար բեղեր ունի, կզակը խուզուած է։ Մորթին գցել է դռանը եւ վրան թէք ընկած, կիսաքուն երազում է։ Սթափուելով եւ առանց ներս նայելու)… Ուստիա՛ն։

ՈՒՍՏԻԱՆ.– (Չարադէմ, կոպիտ եւ հաստլիկ կին, կերակուր է խառնում թոնրի մէջ) Հրամայի՛, աղա՛։

ՆԱԶԱՐ.– Ուստիան, ի՞նչ եմ ասում, օրը թեքուեց, հը՞։

ՈՒՍՏԻԱՆ.– Քո՞ռ ես, մտի՛կ արա,

ՆԱԶԱՐ.– Ես էլ էդ եմ ասում,

ՈՒՍՏԻԱՆ.– Թէ որ էդ ես ասում՝ էլ ի՞նչ ես խօսում։

ՆԱԶԱՐ.– Ասում եմ գնամ գեղամէջ, թալանը բերեմ։

ՈՒՍՏԻԱՆ.– (Հետաքրքիր) Թ՛ալա՞նը, հա՞, ո՞ւր է, բեր։

ՆԱԶԱՐ.– (Ծոծրակը քորելով) Ասում եմ վեր կենամ մի գնամ։ (Վեր է կենում եւ մորթին քարշ տալով բերում քցում է թոնրի կողքին եւ վեր ընկնում վրան) Գնամ, ասում եմ, էն իքը, գեղամէջ…

ՈՒՍՏԻԱՆ.– Բը ե՛… էլ ո՞ւր վեր ընկար,

ՆԱԶԱՐ.– Հա, էդ եմ ասում ես էլ…

ՈՒՍՏԻԱՆ.– Բա գնում էիր գեղամէջ թալան բերես։

ՆԱԶԱՐ.– Ես էլ էդ եմ ասում։ Տեսնեմ տղերքը գեղամիջումն են։ Մի զարկեմ սարը, քարուան-բան անցկենալիս կլինի…